ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1/3.1-3-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի հայտերի բացման նիստի

2025թ. հուլիսի 22-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հայտերի բացման առցանց նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ (առցանց)
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Ա.Ոսկանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Ներկայացված հայտերի բացում armeps.am համակարգի միջոցով:
2. Հայտերի գնահատման ժամկետի սահմանում:
3. Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի հաստատում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ

1. Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

2. Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման համար մրցույթին ներկայացվել է 10 (տաս) հայտ, հետևյալ ֆինանսական առաջարկներով՝

- **«Արվեստա» ՍՊԸ**-ի (8,980,000 (ութ միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ),
- **«Կայթ կրթամշակութային» ՀԿ**-ի (9,552,500 (ինը միլիոն հինգ հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)),
- **«Կապանի երիտասարդական կենտրոն» ՀԿ**-ի (28,605,000 (քսանութ միլիոն վեց հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)),
- **«Արագած հովիտ տեղական ակտիվ խումբ» տարածքային զարգացման ՀԿ**-ի (8,430,000 (ութ միլիոն չորս հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)),
- **«Սիգմա հոլդինգ» ՍՊԸ**-ի (20,945,000 (քսան միլիոն ինը հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)),
- **«Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ**-ի (11,465,000 (տասնմեկ միլիոն չորս հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ (այդ թվում ԱԱՀ)),
- **«Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ**-ի (15,650,000 (տասնհինգ միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)),
- **«Արեգակ Արդար» ՍՊԸ**-ի (32,758,300 (երեսուներկու միլիոն յոթ հարյուր հիսունութ հազար երեք հարյուր) (այդ թվում ԱԱՀ) ՀՀ դրամ),
- **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆՈՏՈՒՐԻԶՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԿ**-ի (25,620,833.30 (քսանհինգ միլիոն վեց հարյուր քսան հազար ութ հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)),
- **«Այ-Լինկ գաղափարների բաց հարթակ կրթամշակութային» ՀԿ**-ի (17,604,000 (տասնյոթ միլիոն վեց հարյուր չորս հազար) դրամ (առանց ԱԱՀ) ՀՀ դրամ) կողմից:

Լսեցին՝

Հայտերի գնահատման ժամկետի սահմանման մասին:

Որոշեցին՝

Հայտերի գնահատման ժամկետ սահմանել մինչև 2025թ. օգոստոսի 4-ը, ժամը 15^{00}-ն:

Լսեցին՝

Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա և ժամի հաստատման մասին:

Որոշեցին՝

Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստն անցկացնել 2025թ. օգոստոսի 4-ին, ժամը 17^{00}-ին:

Ա.Մկրտչյան
(Հանձնաժողովի նախագահ) - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Ա.Բաբայան - _____

Ա.Ոսկանյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____